# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 124-Ա

«24»դեկտեմբերի 2024 թվականի — գյուղ Ամասիա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՕՏԱՐԵԼՈՒ, ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին.

**որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդով օտարվող հողամասի մեկնարկային գինն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ**

**ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝**

*Կողմ՝ 8* — *Դեմ՝ 0* — *Ձեռնպահ՝ 0*

Հարությունյան Ջ.
Ախցխեցյան Է.
Աբրահամյան Ն.
Մարդոյան Գ.
Զաքարյան Հ.

Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.
Մարտիրոսյան Հ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«24» դեկտեմբերի 2024 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՎԵԼՎԱԾ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ամասիա համայնքի ավագանու 2024 թվականի
Դեկտեմբերի 24-ի թիվ 124-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐՆ ՈՒ ԱՃՈՒՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Հ/Հ | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը Հողամասի մակերեսը /ք.մ/ | Գույքի պետական գրանցման վկայա-կանի համարը | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների /ներառյալ սերվիտուտների առկայությունը/ | Օտարման եղանակը | Տվյալ հողամասի 1 ք.մ.-ի կադաստրային արժեքը /դրամ/ | Տվյալ հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկային գինը /դրամ/ | Հողամասի աճուրդով վաճառքի մեկնարկ. Գինը՝ կադաստրային արժեքի նկատմամբ (%) | Աճուրդի նախավճարի չափը մեկնարկ. Գնի նկատմամբ (%) | Աճուրդի մասնակցի գնային առաջարկի նվազագույն չափը մեկնարկ. Գնի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Բերդաշեն,գ. Պաղակն** բնակավայր 6-րդ փողոց, 3/1 հողամաս | 08-028-0001-0024 1323,3 | 28082024-08-0007 | Բնակավայրերի Բնակելի կառուցապատման | Բնակելի տան կառուցում | չկան | աճուրդ | 92,4 | 122280 | 100 | 5 | 5 |
| 2 | Ամասիա բնակավայր 24-րդ փողոց, 8/4 հողամաս | 08-010-0049-0016 1033,3 | 11122024-08-0012 | Բնակավայրերի Բնակելի կառուցապատման | Բնակելի տան կառուցում | չկան | աճուրդ | 141,9 | 146626 | 100 | 5 | 5 |
| 3 | Ամասիա բնակավայր 24-րդ փողոց, 8/2 հողամաս | 08-010-0049-0004 226,8 | 18122024-08-0034 | Բնակավայրերի Բնակելի կառուցապատման | Բնակելի տան կառուցում | չկան | աճուրդ | 141,9 | 32183 | 100 | 5 | 5 |